ծին էջ ի Հօրէն, եդ զՀիմն Արարատայ Եկեղեցւոյն լուսակերտեալ Ս. Էջմիածնի։

Ողջոյն քեզ, Տուն և Առաքելական Աթոռ սրբոց Յակոբեանց։

Ողջոյն համայն միաբանական ուխտին Հայոց, որ իբրեւ խաչակիր զինուոր տքնիք և պաշտէք զանօրինական սուրբ տեղիս և ամենայն անձնուիրութեամբ պաշտպանէք զվիճակն Հայոց ցանկալին և նախանձելին համայնից ազանց։

Ողջոյն Ձեզ, Կաթուղիկոսունք և Պատրիարգունք, որ ընդիս համալծակից եղբայր էք ի վարել և տանել զպաշտօն Քրիստոսի Եկեղեցւոյն. գիտէք թէ քանի՞ մեծ է պատասխանատուութիւն մեր առաջի Մեծ Հովուապետին, զի իւրաքանչիւր ոք ի մէնջ զիւր հօտին համարս ունի տալ։

Ողջոյն Ձեզ, Հովիւք և Առաջնորդք փոքրիկ հօտին Հայոց, որ արթուն աչօք հսկէք և արածէք զհաւատացեալ հօտն Քրիստոսի, յիշելով զբան Տեառն թէ՝ «Հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց»։

Ողջոյն Ձեզ, Վարդապետք Եկեղեցւոյ, որ ուսուցանէք և աւետարանէք զՔանն կենաց. մխիթարեցէք, մխիթարեցէք զժողովուրդ, զի լի եղեւ տրտմութեամբ. թողեալ լիցին մեղք իւր, ասէ Աստուած։

Ողջոյն Ձեզ Քահանայք Բարձրելոյն Աստուծոյ, որ մատակարար էք սուրբ խորհրդոյ Եկեղեցւոյն, դաստիարակք և պահապան ընտանեկան սրբութեան, և գիտէք թէ քանի՞ մեծ է պաշտաօն ձեր։

Ողջոյն Ձեզ, Սարկաւագունք, որ խունկ արկանէք առաջի Սեղանոյն Աստուծոյ և մատակարար էք սրբոյն և աղքատին. յիշեցէք զԽաղ սարկաւագն մեծին Ներսիսի՝ նմանողք լերուք նմա։

Ողջոյն Ձեզ, Դպիրք, որ քաղցրաձայն երգօք շարականաց և տաղից, շարժէք զհոգին ջերմեռանդութեան ի ժողովուրդն, պաշտել և սիրել զԱստուած, դուք զվերին սրբաբան դասուցն բերէք զնմանութիւն։

Ողջոյն Ձեզ, Հարք և Եղբարք վանական ուխտին, որ պահապան հրեշտակք էք մնացեալ նշխարաց վանօրէից, որք յաւեր-